ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N05
նախագծային աշխատանքների կապալի

Ք. Էջմիածին «07» հուլիս 2020թ.

«Իգդիր Մավ» ՍՊԸ, այսուհետ Կապալառու, ի դեմս տնօրեն Աշոտ Դավթյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա մի կողմից, և ՀՀ ՀԿԱԾ Արմավիրի մարզային բաժնի Էջմիածնի բաժանմունքի պետ Ն. Ներսիսյանի, այսուհետ Պատվիրատու, մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետև պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի առաջադրանքով կազմել Արմավիրի մ. թ. Էջմիածին Նար-Դոս փողոց 11 հասցեի գազիֆիկացման նախագծա-նախահաշվային աշխատանքներ:
1.2 Կապալառուն պարտավորվում է անցկացնել կաթսայատան պատասխանատուի թույլտվության դասընթացներ:

2. Կողմերի պարտավորությունները

2..1 Պատվիրատուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում նախագծողին վճարել աշխատանքի արդյունքի դիմաց և աջակցել նախագծողին աշխատանքների կատարման գործում:
2.2 Նախագծողը պարտավորվում է աշխատանքները կատարել առաջադրանքին, նորմատիվ ակտերի պահանջներին և սույն պայմանագրին համապատասխան:
2.3 Նախագծողը պարտավորվում է պատվիրատուին հանձնել պատրաստի աշխատանքների արդյունքը (նախագծային-նախահաշվային փաստաթղթերը) համաձայնեցված բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ:

3. Կողմերի իրավունքները

3.1 Պատվիրատուն՝ իրավունք ունի ցանկացած ժամանակ ստուգել նախագծողի կատարած աշխատանքների ընթացքը և որակը առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:
3.2 Պատվիրատուն՝ իրավունք ունի նախագծային աշխատանքներում թերություններ հայտնաբերելու դեպքում, նախագծողից պահանջել փոխհամաձայնեցված ժամկետում անհատույց փոխել նախագծա- նախահաշվային փաստաթղթերը:
3.3 Կապալառուն իրավունք ունի պատվիրատուի կողմից հոդված 5 պահանջը չկատարելու դեպքում հրաժարվել աշխատանքները կատարելուց:
3.4 Կապալառուն իրավունք ունի պատվիրատուի համաձայնությամբ աշխատանքները ավարտել առաջադրանքով սահմանված ժամկետից շուտ:

4. Աշխատանքի կատարումը և հանձնման կարգը

4.1 Կապալառուն աշխատանքները կատարում է իր ուժերով և պատասխանատվություն է կրում աշխատանքների արդյունքի որակի և նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:
4.2 Կապալառուի կողմից աշխատանքները համարվում են ավարտված, երբ դրանց

5. Աշխատանքի գինը

5.1 Սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված աշխատանքների գինը սահմանվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ և կազմում է՝ 40.000 (քառասուն հազար), իսկ 1.2 կետով նախատեսված աշխատանքի գինը կազմում է 25 000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ (ներառյալ հարկերը): Պայմանագրի ամբողջ գումարը կազմում է 65 000 (վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ:

6. Կողմերի պատասխանատվությունները

6.1 Սույն պայմանագրով իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը

7.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա տեղի է ունեցել անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

7.2 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը 3 ամսից ավելի շարունակվելու դեպքում կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին գրավոր ծանուցելով մյուս կողմին:

8. Վեճերի լուծման կարգը

8.1 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

8.2 Սույն պայմանագրի 8.1 կետի պայմանը չի սահմանափակում կողմերի իրավունքը վեճերը լուծելու դատական կարգով:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմ ստորագրելու պահից և գործում է մինչև կողմերի ընդունած պարտավորությունների ամբողջական կատարումը:

9.2 Սույն պայմանագրում բոլոր փոփոխություններն ու լրացումները կատարվում են կողմերի գրավոր համաձայնությամբ:

9.3 Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 օրինակից, մեկական յուրաքանչյուր կողմի համար:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

Կապալառու	Պատվիրատու
«Իգդիր Մավ» ՍՊԸ	ՀՀ ՀԿԱԾ Արմավիրի մարզային բաժնի Էջմիածնի բաժանմունք
ՀՀ Արմավիրի մարզ ք. Էջմիածին Թումանյան 2ա	ք. Էջմիածին Նար-Դոս 11
Հ/Հ 2479400198850000	Հ/Հ 900011288025
ՀՎՀՀ 04727089	ՀՎՀՀ 01223338
«Արդշինբանկ» ՓԲԸ ք. Էջմիածին	
Տնօրեն՝ Ա. Դավթյան	Բաժանմունքի պետ՝ Գ. Ներսիսյան